



Յ Ո Ւ Ց Ա Կ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ԱՏԱՑՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ\*

№ 611  
ՎԱՆՈՆԱԳԻՐՔ

Թերթերը՝ 246:— Պրակները՝ 15:— Մեծությունը՝ 20.9×14.8×3.1 սմ.:— Նյութը՝ բարակ թուղթ:— Կապը՝ մոխրագույն բարակ ստվարաթուղթ:— Պահպանակները՝ սկզբում և վերջում կա մեկական բարակ թուղթ, ինչպես նաև երկուական թերթ մագաղաթ. գրված մանր երկաթագրով (11—12-րդ դդ.): Ունի կրոնական բովանդակություն:— Վիճակը՝ սկզբից և վերջից պակասում է, նաև միջից:— Գրությունը՝ երկայուն:— Դատարկ թղթերը՝ 1ա, 34բ, 35ա, 67բ, 68ա, 100բ, 101ա, 132բ, 133ա, 158բ, 163բ, 166ա և 246բ:— Տողերը՝ 36:— Գիրը՝ նուրբգիր: Զարդագրություն՝ մատյանում կան բազմաթիվ սիրուն թռչնագրեր, վարդագրեր և լուսանցավարդեր, ինչպես նաև մի հատ գլխավարդ (թ. 13բ) —Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուն՝ անհայտ:— Ծաղկողը՝ անհայտ:— Ժամանակը՝ 18-րդ դար:— Վայրը՝ անհայտ:— Ծանոթագրություն՝ ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ

(Զեռագիրը միկրոֆիլմով լուսանկարված քակսի-միլն մի օրինակն է այն մատյանին, որ ներկայիս

\* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № № Ա-ից, Դ-ից, 1979 թվականի № № Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի № № Բ—Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից, 1981 թվականի № № Ա—Դ-ից, Է-ից, Թ—ԺԲ-ից, 1982 թվականի № № Ա-ից, Գ-ից, Ժ—ԺԲ-ից, 1983 թվականի № № Բ—Գ-ից, Է—Ժ-ից, 1984 թվականի № № Բ—Գ-ից, Ե—Զ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1985 թվականի № № Բ—Գ-ից և Է—Բ-ից:

գտնվում է Ամերիկայի Միացյալ Նահանգաց Լուդոն նահանգի Անն Արբոր քաղաքի համալսարանի գրադարանում):

Թ. 159ա.— Ի խնդրոյ Թումայ վրայի ածաբնակ սբ ուխտին Մեծոփայ վանաց և ծայաբար կտրել ածակիր հոգելից առն այ Յակոբայ վրայի Դրիմեց-տոյ աշկտի Գեորգեայ վրայի Եզնկացոյ յղգս ալ-գակնեց բաժանման:

(Մատյանում կան մի շարք՝ աղյուսակներ ազգակցական կապերի, ամուսնության թույլատվության և արգելման մասին, հետևյալ էջերում՝ 159բ, 160ա, 161ա, 161բ, 162ա, 162բ, 164ա, 164բ և 202բ: Այս վերջին էջը վերնագրված է «Գիրք դատաստանի»):

<ԻՇԱՏԱՎԱՐՄԱՆ

Թ. 208ա.— ....ապիթեպ բն.տր.կ.նէ անցան լալին ցնէլ և անտղայ յիրս ամ լինել. ակյն ոչ է հնար որ իշխնելև և յապկնէ բնխս. և այդ յոյժ քաջաբանից. մի չափ և մեղմիցէ ուր ամ ինչ գծ սղալեայ եղև և գրէ թէ յիսկպբանէ. վայ վասնս վկնի մեր եկեալադ վհարս և վեղբարս. ի վզն ժմկս աղչեմ մաթանօք պղով և պոյ սկւ սղայանս ուղղեսչիք պահիք ընթերցմբ տառիւ. և վիրաւացի թերին 19ջէք որպէս վերագոյն ծանուցաւ պի հարկ և ի վեր քան վհարկ պսալանացն ունիմ պճո նխ պբիծն անձին. պոր վներգծլին խափանէ հոյն, և ապա վախտս մրմնոյն. և պի փայտ անվարժին համօրէն սեռի և յազգի. և դձ անպարապի. պի ըղ ըստեամբ ախտժե տիւ վմանկուես ունէին բանի. և պպան-դըխտուի և պանտեղլի և պանտեղլեկի և գրչևե, և պիկոկի ներքնոց և արտաքնոց պգայւեց տկրլի. և վմարտս դիւաց. և վպկսի գծեաց գծագրեւ և վաղքատի մատենից յորոց վնիթս հաւաքել ի դէպէր բանից. ապա թէ ընտանի ազգիս բարոյից սխլնցն լինիջիք պարսաւիչ. և ոչ ուղիղ գիտելով պգծ հայկապնեայցս վարդկս. միանգամայն պչափ անձին անմեղադիր ձեպ այրոցիկ իխնմբ. ապա թէ սիրով մերոյս պատահիք բանից. և ինամիչ կամօք պթերին լնուցուք ի տէ պիտուցմն առջիք բրց. և վզանս բանից ձերով երկամբ յեկողցիս ամբարնեջիք. յիջտկ բրց մնալ ձեպ ի նմ. բայց ձեռն արկւի ձեպ այսմ իրողլի եղև. ի թուին հյց ՈԼԳ (1185). և շրջանին երթալոյ ի բաց. ձԱ (101). որ կոչի վոքը. իսկ Հոռոմին. ՆԾ յայսմ անիշխանե թգրե մերոյ ի վաղընջուց ի ժմկի մնացելոց սկւ իշխանց ի կողմանս հաչնտոյ ըթ ժմկս անուանելոյ Հասա-

նայ կրաւորեցելոյ. և որդոյ նր Վաղտանգոյ. ի դղելի որ անուանի Հայթերք գլխաւորի այլոց իշխանաց. և կողմանց Կիլիկիայ մեծ իշխանին Ռուբենի. յամի յորում մեռաւ յաղթող թգրն վրաց Գորգի, ի հաււն տն Գրիգորի հայոց մեծագ. և դիտապետն տն Ստեփանոսի տանա աղուանից յ(աշխարհ) իս Առախտոյ. ի նահանգիս որ կոչի մայրաքղքին Գանձակ յնայ և եղբայրանոցս անուանեալ Բասնոյ. սկսբնաւորել ի լեռնջակողմ մենաստանին կոչեցելոյ Հռոմաշէն. ըդ հովանեաւ սքց եկղցեց կուսանացն յիշեցելոց ձեռնտուութ հօր Յովսէփայ և եղբօր Պղսի յորդորմբ ի յշարկփա: Բայց գծագրուի յիշուիս ի նխադրուս գրոց դաստի եղն փ կած սր ի ձեռն մեր միանգամ ոչ է 9 (=որպէս) ասցլէ կանխաւ պատճռն. և արդ որքան է կարի գծ արկանեմբ հիսել փնի փիր. դաստի: Ընդորս և վայս ևս մաղթեմք. որ թէ պտիի և հճ ունց թուի յօրինակէ աստի քս ել փիրս դաստի ըդ նմին փեսացիք և փիշտկս վայս յիշուկէ նոքօք վնեպ. որովք համօրէն յիշեալ յիշիք ի Քս Յս ՚ տր մեր: Զայս մակրագիծ յիշուկրսս յետո գրե որ, թուրք մի շուքէ որ նշան կայ:

ՀԻՇԱՏԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի առաջին երեսին գրված է)  
Վեհիկ  
24 օձ.

(նույն տեղը տպված է)

OPB

ARMENIAN MANUSCRIPT  
University Microfilms, Inc.  
Ann Arbor, London.

- Թ. 3բ.— Պակաս են մէջէն  
1, 128 և 129 թերթերը:  
Պրակ Ժ և ԺԱ 18 թերթ ունին:  
Պրակ ԺԵ 12 թերթ ունի,  
Վերջէն 4 թերթ կը պակսի:  
6 յն. 1959  
Տ.Ա.Ն. (Տիրան Արքեպիսկոպոս Ներսիսյան—Ն. Մ.):

Թ. 13ա.— (Կա մի փոքր կնիք, 2 սմ. տրամագծով, որ անընթեռնելի է):

Թ. 17բ.— Տիրան, հայր (երկաթագրով գրված):

Թ. 26բ.— Այս կանոն պարտ է պահել յետ երկրորդի կանոնաց Նիկիոյ գրել յառաջ 8 թուրք. և անդ գրի'ր:

№ 612

ՍՈՒՐԲ ՄԻՒՌՈՒՆ

Թերթերը՝ 50:— Պրակները՝ 4:— Մեծությունը՝ 20.6×17.4×0.6 սմ.:— Նյութը՝ տետրակի հասարակ թուղթ:— Կազմը՝ չունի, սակայն յուրաքանչյուր պրակ տետրակի կանաչավուն թղթայ շապիկ ունի:— Պահպանակներ՝ չունի:— Վիճակը՝ անբավարար, առաջին սրբավը (տետրակը) պակասում է, իսկ շրոշ թերթեր պոկված են:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ թղթերը՝ բոլոր թերթերի կռակի մասը դատարկ է, բացի 46բ էջը, ինչպես նաև 47բ—50բ էջերը:— Տողերը՝ 20:— Գծումները՝ թուղթն ինքնին գծավոր է:— Գիրը՝ շեղագիր:— Զարդագրություն՝ չունի:— Գրիչը՝ Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան (1879—1965):— Պատվիրատուն՝ Ն. Ս. Օ. Տ. Ս. Վապգեն Առաջին, Ամենայն Հայոց Կաթողիկոս:— Ժամանակը՝ 1959—1966 թթ.:— Վայրը՝ Ս. Էջմիածնի վանք:— Ծանոթագրություն՝ ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Թ. 1ա.— Ծնունդ Աստուածաշունչ Ս. Գրքում:  
Ս. Մարմնի օծման մասին:
- Թ. 5ա.— Թագավորների օծումը Հին Կտակարանում:
- Թ. 6ա.— Օծումը Նոր Կտակարանում:
- Թ. 10ա.— Զեռնադրությունը առաքյալների ժամանակ:
- Թ. 12ա.— Օծումը առաքյալների ժամանակ:
- Թ. 15ա.— Հիվանդների օծումը:
- Թ. 17ա.— Ս. Միւռնի գործածությունը Հայաստանյայց եկեղեցում:  
Երեխաների մկրտությունը:
- Թ. 19ա.— Ս. Միւռնի գործածությունը այլ դեպքերում:
- Թ. 20.— Սրբազևագործ պաշտօնյաները:
- Թ. 22ա.— Զրօրնյաց կամ Աստուածահայտնության օրը Ս. Միւռնի գործածությունը:
- Թ. 24ա.— Թագավորների օծումը հայերի մեջ:
- Թ. 29ա.— Ս. Միւռնի մասին:
- Թ. 30ա.— Ս. Միւռնի օրհնության իրավունքը:
- Թ. 32ա.— Հայոց Ս. Միւռնը (այստեղ տրվում է Ս. Միւռնի բաղկացուցիչ 45 կյուրերի և ծաղիկների անվանացանկը և քանակը—Ն. Մ.):
- Թ. 38ա.— Ս. Միւռնի օրհնությունը:
- Թ. 46ա.— Ս. Միւռնօրհնությունները հին դարերում:
- Թ. 47ա.— Ս. Միւռնօրհնությունները քաներորդ դարում:

(Զեռագիրն ժամանակին կարդացել է Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը (1881—1960) և մի շարք տեղեր կարմիր թանաքով որոշ սրբագրություններ է կատարել):

ՀԻՇԱՏԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- (Վեհափառ Հայրապետի ձեռագրով գրված է հետևյալը յուրաքանչյուր պրակի շապիկի վրա):  
(Պրակ) 2. Զեռագիր Սահակ արքեպ. 1966:  
(Պրակ) 3. Զեռագիր Սահակ արքեպ.-ի Տեր-Յովհաննէսեանի: 1966:  
(Պրակ) 4. Զեռագիր Սահակ արքեպ.-ի 1966:

(Պրակ) 5. Ձեռագիր Սահակ արքեպ. Տեր Յովհաննէսեանի:

1966:

(Ձեռագրում կա նաև երկու թուղթ.—

ա. ձեռագրի գրվածքների ցուցակը.

բ. 11 կիշենների ցուցակը, ըստ երևույթի տպագրության համար):

№ 613

ԴԻՈՆԵՍԻՈՍ

**Թերթերը՝ 379:**— Պրակները՝ 32, յուրաքանչյուրը 12 թերթից, բացի Ա և ԼԱ պրակները, որոնք 10 թերթ ունեն, իսկ ԼԲ՝ 11:— Մեծությունը՝ 17.5×12.3×5.8 սմ.:— Նյութը՝ սպիտակ դիմացկուն թուղթ:— Կապը՝ հայկական կազմարարական արվեստի հիանալի մի նմուշ է սա:— Կարմիր կաշեպատ տախտակ, որի երկու երեսին և կողքին կան ճշումով և ոսկեգույնով նկարված ծաղիկներ, թռչուններ և վարդեր: Առաջին երեսի վրա փոքրիկ օվալաձև շրջանակում նկարված է Քրիստոսի խաչելությունը, որի վերևի մասում գրված է «Յ. Ն. Թ. Հ.» տառերը, իսկ կապի կռակում, նույնիսկ փոքրիկ օվալաձև շրջանակում նկարված է Տիրամայրը, որ գրված է իր որդուն՝ Հիսուսին: Կապի կողքի մասն էլ վարդարված է ոսկեգույն վարդերով և մեծատառերով գրված է ձեռագիր մատյանի անունը, այսպես «Դիոնեսիոս»:— **Պահպանակները՝** սկզբում կա մի թերթ հաստ թուղթ:— **Վիճակը՝** գերազանց:— **Գրությունը՝** միայրուն:— **Դասարկ թղթերը՝** 3բ և 374ա—379բ:— **Տողերը՝** 22:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** նտարգիր:— **Ձարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Ստեփաննոս Երվակցի, կամ Լեհացի (17-րդ դար):— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1662 թ.:— **Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք:— **Մտնութագրություն՝** սույն արժեքավոր ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆՂԱՎՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիր մատյանը իանդիսանում է Ա դարու հույն հոգևորական Դիոնեսիոս Արիսպագացու մեկ աշխատությունը, որ հետագայում լատիներենի է թարգմանվել, որից Ստեփաննոս վարդապետ Լեհացին 17-րդ դարում Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հայերենի է թարգմանել:

Ինչպես հայտնի է, Դիոնեսիոս Արիսպագացին Ա դարում քրիստոնյա դարձավ Պողոս առաքյալի (-67) քարտուղյամբ և ապա ձեռնադրվեց եպիսկոպոս Աթենացոց, իսկ հետագայում նահատակվեց հրով: Դիոնեսիոսը թողել է եկեղեցական բնույթի մի ընդարձակ աշխատություն, որ հետագայում թարգմանվել է նաև այլ լեզուների:

17-րդ դարում Ստեփաննոս Լեհացին կամ Իվովցին Լեհաստանից փախչելով կաթոլիկ դարձած Նիկոլի Խալաձանքներից նկրվ էջմիածին և իր հետո-

թյան շնորհիվ, ինչպես գրում է Հրաչյա Աճառյանը, Փիլիպպոս Կաթողիկոսից (1633—1655 թթ.) վարդապետական աստիճան ստացավ: Նա գիտեր քաջ լատիներեն: Մայր Աթոռում սովորեց նաև հայերեն և լատիներենից թարգմանեց վանական արժեքավոր գործեր, ինչպես՝ Պատմություն Հովսեփոսի (1660), Դիոնեսիոս Արիսպագացի և լուծմունք նորին (1662), Վարք Դիոնեսիոսի և հիշատակարան յուր, Արիստոտելի մետաֆիզիկան, Հաղագս մարդկային հոգվո (1668) և այլ աշխատություններ:

Ստեփաննոս Լեհացին սույն ձեռագիրը գրել է 1662 թ., ինչպես նշված է մատյանի հիշատակարանում, Հակոբ Դ. Ջուլյայեցի կաթողիկոսի (1655—1680 թթ.) օրոք:

Թ. 2բ.— Դիոնեսիոսի Արիսպագացու եպիսկոպոսի աթենացույ՝ առ Տիմոթեոս եպիսկոպոս Եփեսացուց, յաղագս երկնայնոց քահանայապետութիւն:

Թ. 3ա.— Ցանկ գլխոյս:

Թ. 9բ.— Գլուխ երկրորդ: Եթէ վայելաբար ասուածայինքն և երկնայինքն ի ձեռն աննմանիցն նշանաց երկին:

Թ. 22ա.— Գլուխ երրորդ: Ձինչ է քահանայապետութիւն. և զինչ քահանայապետութեանն իմածուած:

Թ. 27ա.— Գլուխ չորրորդ: Ձինչ նշանակէ հրեշտակաց մականունութիւն:

Թ. 34ա.— Գլուխ հինգերորդ: Վասն էր ամենայն երկնայինքն Էութիւնք ըստ հասարակաց հրեշտակք կոչին:

Թ. 36բ.— Գլուխ վեցերորդ: Որ առաջին վարդ երկնայնոցն Էութեան, ո՞ր միջին, և ո՞ր վերջին:

Թ. 39ա.— Գլուխ եօթներորդ: Յաղագս սերովբէիցն և քերովբէից և սլոռոց. և յաղագս առաջին քահանայապետութեան նոցա:

Թ. 50բ.— Գլուխ ութերորդ: Յաղագս տէրութեանց, և զօրութեանց, և իշխանութեանց, և յաղագս միջին քահանայապետութեան նոցա:

Թ. 56բ.— Գլուխ իններորդ: Յաղագս պետութեանց, և հրեշտակապետաց, և վերջին քահանայապետութեանց:

Թ. 63բ.— Գլուխ տասներորդ: Վերստին առումն և ժողովումն հրեշտակականին բարեկարգութեան:

Թ. 65բ.— Գլուխ մետասաներորդ: Վասն է՞ր ամենայն երկնային Էութիւնք առ հասարակ զօրութիւնք երկնային կոչեն:

Թ. 68ա.— Բնաբան. ԲԺաներորդ: Վասն է՞ր մարդկան քահանայապետք հրեշտակք կոչին:

Թ. 70բ.— Գլուխ երեքտասներորդ: Վասն է՞ր ի սերովբէէն ասի մաքրիլ մարգարէն Եսայի:

Թ. 78բ.— Գլուխ չորեքտասներորդ: Ձինչ նըշանակէ աւանդեալն հրեշտակական թիւ:

Թ. 92բ.— Սրբոյն Դիոնեսիոսի Արիսպագացու եպիսկոպոսի Աթենացու, առ Տիմոթեոս աշակերտն Պողոսի եպիսկոպոս Եփեսոսի. յաղագս եկեղեցական քահանայապետութեան:

Գլուխ Առաջին: Ձինչ է եկրեցականին քահանայապետութեան ավանդութիւն և զի՞նչ այտորիկ դիտումն:

Թ. 100բ.— Գլուխ երկրորդ: Յաղագս ի մկրտութիւնն կատարմանց:

Թ. 113ա.— Գլուխ երրորդ: Յաղագս ի ժողովի կատարմանց:

Թ. 133ա.— Գլուխ չորրորդ: Յաղագս մեռնին կատարման. և նովա կատարելոցն:

Թ. 144ա.— Գլուխ հինգերորդ: Յաղագս քահանայականաց կարգաց և կատարմանց:

Թ. 156բ.— Գլուխ վեցերորդ: Յաղագս նովիքնցելոցն կարգաց:

Թ. 163ա.— Գլուխ Է. երրորդ: Յաղագս ի վերայ ննջեցելոցն կատարման:

Թ. 178ա.— Գլուխ Վառջին: Չի՛նչ դիտաւորութիւն գրոցս, և զի՛նչ յաղագս աստուածային անուանց աւանդութիւնք և ասացեալքն:

Թ. 197ա.— Գլուխ երկրորդ: Նոյն ինքն բարերարութիւնն ի սրբական ասացելոցն օրհնաբանի. որոջել և յայտնել վաստուածապետական բոլոր գոյութիւնն:

Թ. 212ա.— Գլուխ երրորդ: Թէ զի՛նչ է աղօթից զօրութիւն: Եւ յաղագս երանելոյն յեռօթէոսի: Եւ յաղագս երկիւղածութեան. և շարագրութեան աստուածաբանականի:

Թ. 216բ.— Գլուխ չորրորդ: Յաղագս բարոյ, լուսոյ, ակնութեան, տափման, վարմացման, նախանձու: Եւ եթէ չար ոչ գոյէ և ոչ ի գոյից. և ոչ ի գոյսս:

Թ. 262բ.— Գլուխ Ե: Յաղագս էի. յորում և յսղագս յարացուցի:

Թ. 278բ.— Գլուխ Չ:

Թ. 282ա.— Գլուխ Է. երրորդ. Յաղագս իմաստութեան. մտաց բանի. ճշմարտութեան. հաւատոյ:

Թ. 293ա.— Գլուխ Ը: Յաղագս զօրութեան. արդարութեան. փրկութեան. փրկանաց. յորում և յաղագս անհաւասարութեան:

Թ. 301բ.— Գլուխ Թ: Յաղագս մեծի. փոքու սորին. այլոյ. նմանոյ աննմանոյ կայից. շարժութեան. հաւասարութեան:

Թ. 311բ.— Գլուխ Ժ: Յաղագս ամենակալին հնոյն աւուրց յորում և յաղագս յաւիտենի և ժամանակի:

Թ. 314ա.— Գլուխ ԺԱ: (Թ. 314բ) Յաղագս խաղաղութեան ինքնագոյոյ. և ինքնակենաց և նոցուց նմանեաց:

Թ. 322ա.— Գլուխ ԺԲ: Յաղագս սրբոյն սրբոց թագաւորին թագաւորաց. տեանն տէրանց այն աս (Թ. 322բ) տուծոց:

Թ. 324բ.— Գլուխ ԺԳ: Յաղագս կատարելոյն. և միոյն:

Թ. 338բ.— Գլուխ Դ: Թէ ոչինչ է ի վզալեացս ամենայն վզալեաց գերունակապէս պատճառն:

Թ. 339ա.— Գլուխ Ե: Թէ ոչինչ է յիմացականացն ամենայն իմացականացն գերունակութեան պատճառն:

Թ. 347ա.— Առ Պօղիկարպոս քահանայապետ, թուղթ Է:

Թ. 352բ.— Առ Դիմոփիլոս սպասաւոր յաղագս անձնիջխան գործոյ և քաղցրութեան: Թուղթ Ը:

Թ. 364ա.— Թուղթ Ժ: Առ Յովհաննէս աստուածաբան առաքեալ և աւետարանիչ աքսորեալ ի Պատմոս կղզէ:

Թ. 365ա.— Թուղթ Դիոնէսիոսի Արիսպագացոյ. առաջին եպիսկոպոսի Աթենացոց քաղաքին: Չոր գրեաց նա պատասխանի թղթոյն Տիտոսի եպիսկոպոսի Կրետացոց: Յաղագս ննջման սուրբ Աստուածածնին և միշտ կուսին Մարիամու:

Թ. 369ա.— Թուղթ Դիոնէսիոսի Արիսպագացոյ: Յաղագս մահուան Պետրոսի և Պօղոսի, առ Դիմոթէոս աշակերտն Պօղոսի:

<ԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.— Յառաջաբանութիւն գրոց:

Նախ քան զձեռնարկել յիրողութիւնս՝ արժան վարկանիմ պատճառ արտագրել. թէ վասն է՛ր համարձակեցայ վերստին թարգմանութիւն առնել մի գուցէ թուեցի ումեք աւելորդ գոյ աշխատութիւնս մեր: Արդ վասն զի թարգմանութիւնս սրբոյն Ստեփանոսի Սիւնեաց Եպիսկոպոսի՝ էր դժուարիմաց, և բնաբանն ի բազում տեղիս փոփոխեալ. և մեկնութիւնս առ ի սրբոյն Մաքսիմոսէ արարեալ, կիսակատար թարգմանեալ, քանզի ոչ եթէ ինքն սուրբն Ստեփանոս մեկնեաց, որպէս ումանք կարծեն, այլ ի յունաց բարբառոյ ի մերս թարգմանեաց: Վասն որոյ ես Ստեփանոս Երովացի յետին ի բանասիրացն, ի խնդրոց եղբարց ուսումնասիրաց, ի դուռն Սրբոյ Աթոռոյ Էջմիածնի, համարձակեցայ միւսանգամ թարգմանել ի լատինացոց բարբառոյ ի հայոց լեզու, թէ զբնաբանն, և թէ զմեկնութիւնն լիակատար և զիւրաքանչիւր գլուխ բաժանեցի ի գլխաւոր մասունս, զորոց ցանկս ըստ իւրաքանչիւր մասանց ի սկիզբն գլխոց համառօտիւք եղի, զի այսպէս դիտաւորութիւն բանիցն դիւրաւ իմացի: Եւ այգս վկայի իւրաքանչիւր մասին, բնաբանին մեկնութեան շարագրեցի: Եւ արտաքոյ մեկնութիւնս զոր արարեալ էր սրբոցն Մաքսիմոսի յունաց վարդապետին, այլուստ ևս բազում բանս մեկնողականս առ ի բացայայտութիւն նկարագրին (Թ. 1բ) դրոջմեցի: Եւ գիտելի է ուսումնասիրացն զի արտաքոյ շարագրութեանս որք այսօր առ մեզ են, զայլ ևս իրողութեանս յիշատակ իւր կորովամիտ իմաստութեան սուրբն Դիոնէսիոս թողեալ էր. որք ոչ են ի միջի այսօր և զորս ինքն յիշատակի, և են այտօրիկ: Ա. Յաղագս նշանական աստուածաբանութեան: Բ. Յաղագս անձին: Գ. Յաղագս աստուածայնոցն օրհնաբանութեանց: Դ. Յաղագս աստուածաբանական տպաւորութեանց: Ե. Յաղագս արդարոյ և աստածայնոյ իրաւագործութեան: Չ. Յաղագս իմացականացն և զգլխոցն, իսկ մնացեալ շարագրութիւնքն որ այսօր առ մեզ գրտանին են այտօրիկ.....

Թ. 364բ.— Յիշատակարան գրոց:

Ընտրիւ և գթութեամբն Աստուծոյ ես՝ Ստեփանոս Իլովացի, յետին ի բանասիրաց, տեսեալ զգիրս սրբոյն Դիոնէսիոսի այլափոխեալ և բազում անգլիս սպակսնեալ, փոյթ յանձին կալայ վկարտին

թարգմանել ի լատինացոց բարբառոյ ի մեր լեզուս և վայս աշխատութիւնս յանձն առի մանաւանդ վասն յիշելոյ:

Արդ եթէ ինչ բարոք և հաճոյ թուեսցի ուսումնասիրաց և ընթերցողացդ, փառք և գոհութիւն տուողին պշտորիս. իսկ եթէ ինչ ոչ ուղղակի և ընդդէմ արուեստաբանութեան քերթողացն գտանիցի, աղաչեմ ներել պակասութեանս քանզի այսքան մեր կար: Արդ թարգմանութիւն գրոյս եղև ի թուարբրութեան տումարիս հայոց ՌՃԺԱ (1662—Ն. Մ.), և ի հայրապետութեան տեանն Յակոբայ սրբապան կաթողիկոսի ամենայն հայոց, որ վկնի երիցս երանեալ Հայրապետի Տեանն Փիլիպպոսի յաջորդեաց վարթոնն Լուսաւորչին վոր Տէր Աստուած երկայն աւուրս պահեսցէ, ի պարծանս հայոց ապգիս և ի հաստատութիւն կաթողիկէ եկեղեցոյ: Եւ արդ հայցեմ ի բարեսէր ուսումնասիրաց անձանց և ի ճաշակողացդ յայսր հոգևոր սեղանոյ, յիշատակել վիս ի մաքրափայլ մաղթանս և ինձ ներումն յանցանաց շնորհել. թերևս աղօթիւք (Թ. 365ա) ձերովք ցօղն ողորմութեան մայրասիրին Աստուծոյ ցողեսցի ի շիրիմ ոսկերաց իմոց և աւուռն գրեսցի ի դպրութիւն կենացս, որով և դուք եղիջիք ի մատեանս կենաց վերին դպրութեան ամեն:

Ընդ ամին մաղթեմ և վայս դուպնաքեայ յիշատակս դրոջմել. եթէ որ վայս իրողութիւնս գաղափար դիցէ. ուստի և ինքն յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է օրինեալ յախտեանս. Ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի վրա գրված է)

Դիոնէսիոս:

- Թ. 208բ.— Hierotheos (տույնը Թ. 237բ):
- Թ. 348ա.— Apollphanos, ուսումնակից, և ապական Դիոնէսիոսի:
- Թ. 352բ.— Dimophilos.
- Թ. 361ա.— Cōrpus.
- Թ. 363բ.— Titus Crete.
- Թ. 364բ.— ՌՃԺԱ—1662:
- Թ. 365բ.— Պարապո... կեռոյ:
- Թ. 366ա.— Չգայ աշխարհ:
- Թ. 366բ.— Ծնեալ 9 յ. ք.:
- Թ. 367ա.— Յործամ հաւատ ... 43 ամաց ի 10 ամի Claude կարճ:

Թ. 367բ.— Publius.

Թ. 368ա.— Clement փոխանորդ Ս. Պետրոսի: Յովհաննէս արտաքսեալ ի Պատմոս, ի Domitian prophet, 90 ամաց, Pharos մինչև յամս Trajan կայսեր:

Թ. 368բ.— Spm. Fescenius, Pescenius, Rusticus Eleutherus, Catalla, 110 ամաց, St. Deny<sup>2</sup>

Թ. 372ա.— Armenon.

Թ. 373բ.— Ի սկզբանէ:

Թ. 378բ.— Մովսէսի և Եղիայի:

Թ. 379բ.— Բ. (այսինքն՝ 40—Ն. Մ.) Դձ (այսինքն՝ դրաձ—Ն. Մ.):

№ 614

ԳԻՐՔ ԶԵՆՆԱԳՐՈՒԹԵԱՆ

**Թերթերը՝ 130:**— Պրակները՝ 12, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի ԺԲ պրակը 4, իսկ Ա և ԺԱ պրակները 8 թերթից են:— **Մեծությունը՝** 18.4×14.2×3.1 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած դիմացկուն հաստ թուղթ:— **Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի երկու երեսին երկրաչափական գեղեցիկ վարդեր են նկարված ճնշումով: Ժամանակին եղել են երկու կապիչներ, որոնք հետագայում ընկել են: Սույն մատյանի կազմը միջնադարյան կազմարարական արվեստի գեղեցիկ նմուշներից է: Ծայրերը որոշ տեղեր պոկված են:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում կա երկուական թերթ դեղնած և կեղտոտած մագաղաթ, որի վրա Նոր Կտակարանից գրություն կա, գրված մանր երկաթագրով, շուրջ 11—12-րդ դարերի:— **Վիճակը՝** բավարար, սակայն որոշ թերթերի տեղաշարժ կա:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 122բ—126ա, 130բ:— **Տողերը՝** 15:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** բոլորգիր:— **Չարդագրություն՝** մատյանն ունի միջնադարյան շատ գեղեցիկ մանրանկարչություն: Կան երեք գեղեցիկ զբլխազարդեր (թթ. 1ա, 50ա և 71ա), երեք թռչնազարդեր (թթ. 1ա, 41ա և 71ա), հինգ վարդազարդեր և ութ լուսանցազարդեր:— **Գրիչը՝** Հակոբ աբեղա Տրապիզոնցի:— **Պատվիրատուն՝** Հովակիմ արքեպիսկոպոս Կոստանդնուպոլսի (հետագայում պատրիարք 1461—78 թթ.):— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1438 թ.:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթագրություն՝** 1983 թ. փետրվարի 4-ին ստացված է նվեր Մարի Կանինյանից (Լոս Անջելոս, ԱՄՆ) ի հիշատակ իր հանգուցյալ հարսպատներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—Սահմանադրութիւն դաստիարակութեան նորածնելոց մանկանց, որք հրաւիրելոց իցեն յաստիճան քահանայութեան. խրատք հարկաւորք և պիտանիք արարեալ մեծ վարժապետին Գրիգոր հռետորին:

Թ. 50ա.— Չգենու եպիսկոպոսն և այլ քահանայք ըստ արիւնի. և դպիրքն բուրվառով. և լուցեալ լսպտերաւք. խաչ առաջի. և գաւազանն ի ձեռինն եկեցցեն արտաքս. և ասեն շարական. ըստ տաւնի աւուրըն. կամ Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի. և Եպիսկոպոսն ծիւծ խունկ սրբոյ սեղանոյն. և սարկաւազն ձայնէ ...

Թ. 71ա.— Կանոն ձեռնադրութեան քահանայի: (Ձեռնադրության սույն մատյանի բազմաթիվ էջերը գրված են հայկական հին խազերով. այսպես՝ թթ. 49ա, 49բ, 65ա, 65բ, 69ա, 69բ, 71ա—72ա, 73բ, 101ա, 101բ և այլն):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐԱՆ

Թ. 117բ.— Գրեցաւ գիրքս ձեռնադրութեան թվ. ԴՊԷ (1438—Ն. Մ.). ի վախճումն արևիկախկոպո-

սին Տեր Յովակիմին Կոստանդնուպոլսի. Վոր Տեր (թ. 118ա) Աստուած վաշխեալ տացէ յամերամս ժամանակաց ամէն: Կոստաբեցա հրամայեալն ի քէն ո՛վ տէր պատուական: Չսակա զծիկս ընկալ յանպիտան Յակոբ աբեղէ Տրապիպոնցի, իբրև վխէր և էջս այրոյն. և անմեղադիր լեր խոշորութեանն և անարհեստութեան և սխալանաց սորա. Վի կար մեր այսչափ էր. և մի մոռանար ի մտաց քո սուրբ ի բարի մասին վանարժանս աղաչան:

ՀԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի մագաղաթի առաջին երեսի վրա գրված է) Այս կիրիս: Այս: Այս կի:

Թ. 118ա.— Ած. Վեցեցուցանէ:

Թ. 118բ.— Չվերջին ստացող սուրբ տառիս, որ ձեռնադրութեան գիրք կոչի վանադասի Մարիամն ետու վաս յիշատակ ինձ և ծնողաց իմոց և յամենայն արեան մերձաւորաց իմոց. ի ձեռն Աստուածատուր վարդապետին որ է յայմու ժամանակին պատրիարք Կոստանդնուպոլսի (1537—1550— Ն. Մ.) մայրաքաղաքի. Վոր Տեր Աստուած վինքն հաստատուն անդրդ (ո) լեկի պահեսցէ: մինչև ի խորին ծերութիւնն. ի վերայ գաւազանին իւրոյ ամէն:

Արդ աղաչան Վեճ ով հանդիպ (թ. 119ա) ուր սուրբ տառիս կարգաբով կամ արքինակերով յիշեցիք ի մաքրափայլ աղաթս ձեր վանադասի Մարիամն և վայրն իմ բարեւեր վետճայ Յովասափա և Կորդիքն իմ վետճայ Պաղշիս և Վհաճի Կիրակոսն և վամենայն արեան մերձօրոսն մեր ասացէք լիակատար սիրով. յոյս վառաց Քրիստոս որդի Աստուծոյ. ի գալստեանդ քո հայրենի փառաք ողորմեայ ամենայն վերագրեցոս ի ամայ և որք բանիս մեղասացէ գործովք նմայ. կատարէ Քրիստոս Աստուած մեր. միջնորդութեամբ մար իւրոյ Մարիամու և յամենայն սրբոց յամէն:

Գրեցաւ սակաւ գիրս ձեռամբ Աստուածատուր Պատրիարքին ի թվին ՋՂԲ (1543 — Ն. Մ.) ապրիլ ԻԱ (21 — Ն. Մ.):

992 թուիս Լուսաւորջի: ՋՂԲ ապրիլ ԻԱ:

Թ. 119բ.— Գրեցաւ գիրս 1299:

Գրեցաւ գիրս ձեռամբ Աջօտցի տիրացու գոչեցեալ Սարգիս, որ եմ ես մեղոք լցեալ, արդ որք իշեցէք Վերափայլ աղօթս ձեր, արդ տուք իշեալ լինիջիք ի Քրիստոսէ ամէն. թվի ՌԲՃԺԹ-ին (1170— Ն. Մ.) ունիսի ԺԲ (12):

Այս գիրիս Կոռունցի Հապատուրեց լուսայիտքի Յակոբի որդի Սիմոնըս կրեցի. թվին հայոց ՌԲՃԼԵ-ին (1786— Ն. Մ.):

Թ. 120ա.— Այս գիրս յԱջօտցի մահտեսի Արուստի սլթի Օվանէսըն կրեց թվ. հայոց ՌԲՃԲԷ (1778— Ն. Մ.): Գրեցաւ գիրս ձեռամբ Աջօտցի:

Գրեցաւ սա ստամայ Պետրոս:

Այս գիրս յԱջօտցի Պետրոսի որթի Պաղձար Վ. թվ. ՌԾԸ (?) է:

Թ. 120բ.— Գրեցաւ գիրիս Կոռունցի Պատրիարքան

լուսայ հոքի Յակոբի որդի Սիմոնիս, ով որ կարթայ, թող մէկ Հայր մեղայ մի ասէ... թվին հայոց ... ՌԲՃԼԵ-ին (1786 — Ն. Մ.) ... 1770-ին:

Գրեցաւ գր.: Թ. 121ա.— Գր.

Գրեցաւ գիրիս Կոռունցի Պատրիարքան լուսայ հոքի Ալսեի որդի:

Թ. 121բ.— Ավ. այս գիրս Աջօտցի Իրատեան Թօրոսի որդի Յակօբս գրեցաւ ՌԲՃՂԳ-ին (1844— Ն. Մ.) թվին հայոց է:

Թ. 122ա.— 184Բ-ին (1874—Ն. Մ.) ապրիլի v-ին (7) մեր Մէսիան աշխարհ եկաւ:

Թ. 126բ.— 1797-ին (1843—Ն. Մ.) մայիսի 10-ին (25) Արուսիսն էմիս առ Աստված փոխեց. օվ որ Կարի Հայր մեղայ ըսէ օծարութեք:

1777 (1854—Ն. Մ.) ին ունվարի 17-ին (26) Ալօբի որդի Մանուկն առ Ած փոխեցաւ: Ը (8) օրեգոյ որդին Մանուկն աշխար էկաւ և քոյս մեռավ: Իշեալ թարիքին Օվեսըն առաւ Վեճիսեց մայիս 18-ին (18) Վիլն լուսավորե հոքիինին:

1870-ին (1860—Ն. Մ.) Փրկչին թղվական փետրվարի 9-ին Յակոբ էմիս առ Աստված փոխեց հորս օվ որ կարթայ օծարութեք Հայր մեղայ մը ըսէ:

Գրեց որթին Նապարէթ: 1777-ին (1855—Ն. Մ.) ապրիլ 10-ին (10) Յակոբի որթի Մարթիստրն առ Աստված փոխեցաւ:

Թ. 127ա.— 1799-ին (1850—Ն. Մ.) մայիսի 17-ին (30) Մանուկի որդի Արուսիսն աշխար էկաւ:

1799-ին (1850—Ն. Մ.) դեկտեմբրի 1-ին (1) Նապարէթի որդի Գելորքն աշխար էկաւ:

1777-ի (1854—Ն. Մ.) ուլիսի 10-ին (10) Օվեսի որդի Օվակիմն աշխար էկաւ:

Թ. 127բ.— Արքայ երկուսուր թագաւոր բարձրով Տր բոլորից ամենից ակնկալութե, ստեղծող տնասակականաց, հաստիչ իմանալեց, անձառ եղականութեց, կապմիչ իմանալեաց, տվիչ լուսոյ, առիթ առլուսոյ, պատրաստիչ վաղորդեան, երսեցուցիչ երեկոյ:

Թվին 170v-ին (1808—Ն. Մ.) օգոստոսի մէկ Յակոբ որդի Մարտիրոսը աշխար էկաւ:

Թվին 1770-ին (1816—Ն. Մ.) մայիսի մեկին Ակոբի որդի Նապարէթը աշխար էկաւ:

Թվին 1778-ին (1819—Ն. Մ.) հոգտեմպերի 10-ին (25) Ակոբի որդի Օվեսըն աշխար էկաւ:

Թվին ... մարտի մեկին Մանուկը աշխար էկաւ:

Թ. 128ա.— Թվին ՌՄԺԶ-ին (1767—Ն. Մ.) մայիսի Ա-ին Նապարէթի որդի Յովէսը աշխար էկաւ:

Թվին ՌՄԻԸ-ին (1779—Ն. Մ.) ունիսի ԺԵ-ին (15) Նապարէթի որդի Արուսիսընը աշխար էկաւ:

Թվին ՌՄԿԳ-ին (1815—Ն. Մ.) ունվարի 4-ին Նապարէթ էմմես առ Ած փոխեցաւ. յօվ որ գարթայ մէկ Հայր մեղայ ըսէ: Չայս գիրս Յովէսի որդի Ակոբս գրեցի:

Թվին 177Բ-ին (1825—Ն. Մ.) օգոստոսի մեկին Արուսիսի որդի Թօրոսը աշխար էկաւ:

Թվին 1779-ին (1830—Ն. Մ.) ուլիսի 10-ին Արուսիսի որդի Գիրգորը աշխար էկաւ:

1787-ին (1833—Ն. Մ.) ունիսիօ-ին (5) Արուսիակի որդի Օվակիմը աշխար էկաւ:

Թ. 128բ.— Որ ես մայիմ քաղցանու չէ կըկա ես վորդիդ քոգայլ եցիկվ աչերս լցեր որդարասօք վոչ ոք ունիմ որ սրբէ: Թքին երես իմ մեղաւորք և ոչ ոք կայ մաքրէ Սբն Օհաննէս հեռի նուէր Պետրոս գիոս ոչ ճանաչէ: Ով Մարամ մաղեղառնի գնայ մօր իմ արդաէթ է որդին քո արքաեդ էր չաղ գայ. վիս գապանէ քանի արք կենդան իմ...

Թ. 129ա.— Որ ես մայր իմ քաղցր անուշիկ, եկ տես վորդիդ քո գեղեցիկ, վաչերս լցեր. որդ արտասօք. վոչ ոք ունիմ որ սրբէ: Թքին երես իմ մեղաւորք և ոչ ոք կայ որ մաքրէ, Սբն Օհաննէս հեռի նուէր. Պետրոս վիս ոչ ճանաչէ: Ով Մարիամ Մագդաղենի գնայ մօր իմ անտէ թէ որդին քո արքա եղէր. շտով գայ վիս գապանէ: Քանի որ ես կենդան իմ թող գայ վիւր կարօտ եկն անտէ, վի մի գուցէ յետոյ եկեալ և վիս մեռեալ գտանէ:

Թ. 129բ.— Գառնուկ որդեակ մի ես ունէի

Չայնիս նորա կու ցնծայի.

Այսօր դարին հազար հեռի

Չմարդիկ արար ողորմելի:

Չարդ մի պայծառ ես ունէի

հոտով նորա վմայելի.

Այսօր եղև յինէն հե....

.... արար խեղճ ու լայի:

....յս կենաց իմ յոյս էր

Չողորմի ողորմելոյս:

Չվերջին համբոյր տուր իմ գերոյս

Չի մի եղեց որդակոյոյս:

Այ իմ կարմիր վարդ որդեանակ իմ

Քեզ կասեմ թե խիստ տեղեւացաւ.

Այ իմ շուշան իսպիտակ որդեանակ

Քեզ կասեմ թէ այրեամբ ներկեցաւ.

Այ իմ աջերտ աղաւնոյ

Քեզ կասեմ թէ խաւարեաց.

Շրթունքդ էր շուշան որդեանակ

Քեզ (Թ. 130ա) կասեմ թէ արիւն ծրեցաւ,

Տեսիլդ գեղեցիկ որդեանակ

Քեզ կասեմ թէդ գեղեցաւ.

Չեռքդ է հրաշագործ որդեանակ

Քեզ կասեմ թէ արոյոյն թուլացաւ.

Դու յէիր աննման որդեանակ

Որ քնաւին չգար քեզ նմանակ.

Թէ ասեմ Աբէլ պատարաք

Նա ծառայ դու Տէր անքանդակ.

Թէ ասեմ ազնիւ ի Սահակ

Նա տղգեղ, դու լուս արեգակն.

Թէ ասեմ Օվակիմ քանտակ

Նայ յեղին, դու նախկին վաւակ:

1878 Կրոյակ Կանխման:

(Վերջում գտնվող մագաղաթայն պահպանակի վրա գրված է.)

Քապիեթլու ճանջիս ավիլ դիւպէրիմ Մէլքոն Լէ-դիւէ իլէրիմ: Քիստէ քիստէ ստլամ լար օլունուր վի:

հաթիրի շերդ քլեր ազլալ օլունուր: Պէնդէյի աշը-տըլը տէ իշ օղլ».

Նապարէթ ԲԲԳ (249—Ն. Մ.) սէնէսի:

Ա Բ Գ Դ Ե Զ ... (գրչավորձ):

(վերջի էջում)

Յիշատակ արդարոց աւրինութեամբ եղիցի:

№ 615

ԴՐՈՒԱԳՆԵՐ ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԻՑ

Թերթերը՝ 113:— Պրակները՝ 11, սկզբից 3 պրակ պակասում է, եղածներն էլ անկանոն են, այսպես ԺԴ՝ 1, Ե և Զ՝ 8, Թ, Ժ, ԺԱ և ԺԳ՝ 11, Է և Ը՝ 12, ԺԲ՝ 13, Դ՝ 16 թերթերից են բաղկացած:— Մեծաթյունը՝ 16.4×10×2 սմ.:— Նյութը՝ դեղնած և կեղտոտած բարակ թուղթ:— Կազմը՝ կարմիր ստվարաթուղթ:— Պահպանակները՝ վերջում կա մի թերթ թուղթ:— Վիճակը՝ վատ, սկզբից 31 թերթ (3 պրակ) և վերջից էլ պակասավոր է, բազմաթիվ թերթեր թափված են:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ թղթերը՝ 31ա—32ա, 96բ—98բ, 101բ—103ա:— Տոդերը՝ 18:— Գծումները՝ ճշումով:— Գիրը՝ բոլորգիր:— Չարդագրություն՝ չունի:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուն՝ անհայտ:— Ժամանակը՝ 16—17-րդ դարեր:— Վայրը՝ անհայտ:— Ծանոթագրություն՝ մատյանն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 4բ.— Յաղագս վասն դարձեալ նենգութեամբ սպանանել զՉաքարիայ զհայրն Յովհաննու:

Թ. 8բ.— Յարուցեալ Յովսէփ վաղվաղակի առ վմանուկն և վմայրն իւր գնաց փախըստական ...

Թ. 13ա.— Յաղագս վասն Յիսուսի խորտակելոյ վկուռսն և կործանելոյ վմեհեանս դիւացն և բազմութիւն մարդկան որ մեռան անդ և յարութիւն եղև իսկ:

Թ. 22բ.— Յաղագս վասն դարձեալ հրեշտակին ապդ աննելոյ Յովսէփայ գնաց յերկիրն Եղի և բնակիւ նոցա յաջխարն Գալիլեացոց քաղաքն Նապարէթ:

Թ. 32բ.— Յաղագս վասն երանելոյն նոցա յեգիպտոսէ և գալի կողմանս հարաւոյ յաջխարին Արաբիայ տղայութիւն վոր անէր Յիսուս և մահուան որ եղև յարութիւն մեռելոց:

Թ. 40ա.— Յաղագս փոխելոյ նոցա անդրէն և գնաց նոցա յերկիրն Ասորեստանեաց:

Թ. 42ա.— Յաղագս վասն երթալոյ նոցա յերկի (ր) և Քանաւու և տղայութիւն վոր անէր Յիսուս և մահուան, որ եղև իսկ և յարութիւն և մեռելութիւն վոր անէր Յիսուս:

Թ. 50բ.— Յաղագս վասն գնալոյ նոցա ի քաղաքն Տապարիայ տալ վնայ ի յարմեստ ներկութեան և տղայութիւն վորս անէր Յիսուս և սքանչեղեացն որ եղև անդ:



Թ. 34ա.— Ժամանակագրոյի Ածաշունչ գրոց ըստ Եօթնամանից՝ ի մերս հեղինակացն հայոց, շնորհապերճ և գիտնական վրդպտցն:

Թ. 36ա.— Տարեկանաց բանալիք և հարկաւոր գլխոյնիք, թուականաւ ՔԻ և Հայոց, ի տողէ նորին, և ի գլխոյն, գաս ի մի տուփ և գտանես՝ վեօթներկն, վերադիրն, գիր տարոյն, և այլն:

(Տրված է 1776—1836 թթ. վաթսուս տարվա ժամանակաշրջանը):

Թ. 37բ.— Պարզատուփար միջոցաց: Տես գլխոյն ի տողն գիր տ (ա) րոյ:

Թ. 39բ.— Չայնագիւտ ի ձեռն տարեգրին. սկիւբըն ի բուն Բարեկենդանին Կիրակին:

Թ. 40ա.— Օրացոյց մշտատն ըստ կարգի Այսմաւորաց մերոց, և համաձայնութի տօնից յունաց, և լատինաց, և տաճկաց թուվամէից. օր աւուր ամսոց՝ հանդերձ եօթն երկիւ, և վերադրաւ մերով:

Թ. 54բ.— Աղիւսակ ծագման արևուն:

Թ. 55ա.— Կէս աւուրն, և կէս գիշերին:

Թ. 55բ.— Լուսնացոյց նորագոյն՝ վերադրաւ հին Հռոմայեցոց:

Թ. 56բ.— Լուսնացոյցս այս մշտատն ըստ տաճկաց Ղուտէ նամէ կամ պէշիխապի անուանի, որ վլուսնի առաջին աւուր պատկեր օրն ցուցանէ:

Թ. 57ա.— Օսմանցոց թգրուն թիւն, Սալթանաթն, և կեանքն ցուցանէ, թարքմանեալ ի նոցունց:

Թ. 58ա.— Կանոն և թիւ հրէից:

Հ Ի Շ Ա Ս Ա Կ Ա Ր Ա Ն Ն Ե Բ

Թ. 23ա.— Փոքր տուփար հայոց, շրջանաւոր և անփոփոխ, գեղեցիկ և դիւրին ոճով: Նախապս յօրինեցեալ ի յերջանկաց հարցն մերոց յառաջնոց, շնորհապերճ և գիտնական վրդպտց: Իսկ և ի կարգենիս մեծաւ աշխատութ սրբագրեցեալ, և իբր նոր ի նորոյ յատկական խրատովք և կանօնիւք, և մշտնջենաւոր պարզատուփարի ի յոյս ածեցեալ ի փառս Այ և ի յօգուտ ազգիս հայոց:

Թ. 54ա.— Կատարումն տարոյս լիցի ի փառս ամենաւար Երրորդունեն ի միոյ Ածունեն Հօր և Որդոյ և Հոգոյն. և ի պատիւ ամ Սբց նր:

Հ Ի Շ Ա Ս Ա Կ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Բ

Թ. 1ա.— Սեփականութիւն Գարեգին քինյ. Կարապետեան, Սոֆիա:

Թ. 23ա.— (Այստեղ կա փոքրիկ մի կնիք, ուղղանկյուն, 1.3X1 սմ. չափսերով: Կապգերով մի անուն կա, որ դժբախտաբար չի վերծանվում: Կնիքը դրված է նույն էջում գտնվող հիշատակարանի ներքև, որով շատ հավանաբար կնիքի տեղը հանդիսացել է ձեռագիր մատյանի գրիչը):

Թ. 34ա.— Մեր տան վարթը, այս հին ավուրիցն մնաց (ա) ծ Սբ Գիրգը մեզ համար:

Ղարիպեան ընտանիք:  
Տարօնի Ավանիւջ քիւղէն:

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ա. Գ Ե Ռ Գ Ե Կ Ե Ղ Ե Ց Ո Ւ

Թերթերը՝ 19:— Մեծութունը՝ 24.3×15×0.3 սմ.:  
— Նյութը՝ լուսանկարչական լավորակ թուղթ:— Կապ՝ չունի:— Պահպանակներ՝ չունի:— Վիճակը՝ լավ:— Գրութունը՝ միասուն:— Դատարկ թղթեր՝ չկան:— Տողերը՝ փոփոխական, 23—33:— Գիրը՝ բոլորգիր:— Չարդագրութուն՝ ձեռագրի շապիկում կա մի մեծ պարբանկար, որ ներկայացնում է ինքնին ձվաձև մի գծանկար, կանգնած պատվանդանի վրա, իսկ վերնից երկու կողմերից կախված են երկու շղթաներ, որոնց յուրաքանչյուրի ծայրին մեկական խաչ կա: Շապիկում գտնվող հիշատակարանը գրված է ձվաձև գծանկարի մեջ: Առաջին էջում կա գեղեցիկ մի գլխավարդ և երկու թռչնագրեր: Մի թռչնագիր էլ կա 10-րդ էջում:— Գրիչը՝ դպիր Պետրոս Տեր-Ստեփանյան Անդրիանուպոլսեցի:— Պատվիրատուն՝ անհայտ:— Ծաղկողը՝ շատ հավանաբար նույն ինքը գրիչ Պետրոս դպիրն է:— Ժամանակը՝ 1828 թ.:— Վայրը՝ Փոլիպոլսոյիս (այժմ Պոլդդիվ, Բուլղարիա):— Ծանոթագրութուն՝ բուն ձեռագրի լուսապատճենը Մայր Աթոռ Ս. Էջմիածին է ուղարկված Բուլղարիայից մի քանի տարի առաջ: (Բուն ձեռագիրն այժմ գտնվում է Բուլղարիայում):

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Չեռագիր մատյանը բովանդակում է այժմ Պովդիվում գտնվող Ա. Գեորգ եկեղեցու կառուցման, հույների կողմից գրավման, ապա կրկին հայերին վերադարձման և վերանորոգության ամբողջ պատմությունը:

Շապիկը—Ստորագրութի Սբյ եկեղեցոյն:

Թ. 1.— Վիպասանութիւն անան Սուրբ Գեորգ եկեղեցոյ, որ ի Մակեդոնիա ի Փոլիպոլսոյիս՝ ի ձեռաց ազգին յունաց, ի չորրորդ Սուլթան Մեհեմէտի ի քսան և եօթներորդ ամի թագաւորութեան նր Նորին Բարձու հրամանաւ:

Թ. 10.— Ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք ի վերուտ են իջեալք առ ի Հօրէն լուտյ. Յակոբ Առաք (եա). Գլ. Ա, հմր ԺԷ:

Հ Ի Շ Ա Ս Ա Կ Ա Ր Ա Ն Ն Ե Բ

(Շապիկի վրա գրված է.)  
Համառօտ տեսութի (և) Սբյ եկեղեցոյն կառուցելոյ յանուն սրբոյն Գեորգայ ի Փոլիպոլսոյիս. և ևս անցից ժողովրդեան Գամինացոց:

Ի նախկին գաղափարէ ընդարձակօրէն արարեցելոյ. ի հապար հարիւր քսան և վեց, թուաբերութեան հայոց. ժողովեալ բարեյօժարութեամբ վՄԵսրոպ Եպիսկոպոս և վներողութեամբն Աստուծոյ Առաջնորդ և վերատեսուչս քաղաքիս:

Յամի Տոն 1828, և ի Հայոց ՌՄՀԷ (1828 թ.— Ն. Մ.) յունիսի 16 ի Փոլիպոլսոյիս ընդ հովանեաւ Սբ Գեորգ եկեղեցոյ:

Թ. 8.— Որ արդ համառօտեալ ի դիւրութիւն իմացման հասարակօրէն յԱնդրիանուպոլսոյ Մեսրոպ Եպիսկոպոսէ. ի թիւ Հայոց հապար երկու հարիւր եօ-

քանասուն և եօթն. և ի յունիսի վեշտասաներորդ ի Փիլիպպուպոյն:

Իսկ արդ՝ վերստին առ օրինակեալ սոյն առ ի սոյն օրինակէ անտի, Պետրոս Դարեա Տէրեայ Ստեփանեան, բնիկ Անդրիանուպոլսեցոյ, ի թիւ Հայոց ՌՄՀԷ-ին (1828 թ.—Ն. Մ.):

Թ. 9.—Ստորագրութի

Սրբոյ եկեղեցոյն, որ ի Փիլիպպուպոյն քաղաք նորոգ կառուցելոյ, յանուն սրբոյն Գեորգայ քաջամարտիկ Ջորավարին Քրիստոսի:

Ի պատրիարգութեան սրբոյն Սաղիմայ՝ Տեան Տեան Գաբրիէ Աստուածարեալ և սրբական Արքեպիսկոպոսին:

Եւ ի պատրիարգութեան Կոստանդնուպոլսոյ Տեան Տեան Կարապետ Աստուածընտիր և սրբական Արքեպիսկոպոսին:

Եւ ի յառաջնորդութեան քաղաքի՝ Տեան Տեան Մեսրոպ Առաքելաշաւիղ Արքեպիսկոպոսին:

յԱմի Տեան մերոյ՝ 1828, և ի Հայոց ՌՄՀԷ, գրեալ ի Փիլիպպուպոյն բարեճոխ քաղաքի, ի սեպտեմբեր ամսոյ 25:

Թ. 15.—Որով և այլով ապա կառուցեալ Սբյ եկեղեցոյս ի հիմանց մեծադիր նորոգութեք, ընդ նմին վայելուչ Առաջնորդարանիս և Դպրատանս՝ եղով ի նմա ներկայ վարիչ Անդրիանուպոլսեցոյ Տէրեայ Ստեփանեան հանձարամիտ տրցւ Պետրոսին՝ (թ. 16) կայ մնա յիշատակ մշտնջենաւոր դրամոյս վերակացու իշխանապետիս և հոգաբարձու իշխանիս և իւրաքանչիւր իշխանաց և համայն ժողովրդոց մանկանց եկեղեցոյ՝ առ յապա եկելոց եղբարց սիրելեաց ի վայելումն՝ հոգևոր և անպատում ուրախութեք, ի ներքին և յարտաքին աչաց տեսութիս:

Չոր և ուրեմն վՄանուկ իշխանապետ աղայս և փորդիս իւր՝ ՎՏիրապարգևս, ՎԳրիգոր և ՎՅովակիմ Չէլչիսն պահեսցէ Տէր ընդ երկայն աւուրս բազում խաղաղութեք՝ անվնաս յամ վնասակար դիպուածոց, և առատացուցէ վամ ինչս իւրեանց՝ առաւել քան պառաւել մինչև վլախտեան: Սոյնպէս ՎԴաւիթ աղայն փոգաբարձու շինութեանս այստրիկ տանն Այ խնամեսցէ Տէր ըստ իւրում ողորմութե հանդերձ Աստուածաշնորհ վաւակօք իւրովք և վարձահատոյց լիցի ի կրկին կեանս՝ պահելով յամ հոգևոր և ի մարմնաւոր վն(ա)սուց և վարդարեղով ընդ երկայն աւուրս յամ բարութեանս իւր:

Նան՝ ՎՄահտեսի Կարապետ աղայն, ՎՄիրիճան աղայն, ՎՄեսրոպ աղայն, և ՎԱւետիս աղայն, ընդ մերձաւոր պարագայս իւրեանց՝ ի շնորհս ողորմութեան իւրոյ պահեսցէ Տէր, և վարդարեսցէ վանական բարութեամբ՝ հոգևոր և մարմնաւոր վայելչութեամբ: Ընդ որս և վմանկունս սրբոյ եկեղեցոյս՝ Վհամայն բարեսէր ժողովուրդոս, ըստ ամ չափու և հասակի՝ ամենաօր աջովն իւրով խնամեսցէ և պահպանեսցէ Տէր. և ամ բարութեամբ ճոխացուցէ ընդ երկայն աւուրս և վամն՝ ի վախճանի՝ սուրբ արքայութե իւրում արժանացուցէ: Ձի սոքայ ամենեքեան ըստ իւրաքանչիւր աստիճանի և արդեանց և աշխատանաց և ջերմեռանդն բաղձանաց՝ արժանի են յիշա-

տակի և մաղթանաց առ Աձ. Վի (թ. 17) ըստ վարձուց իւրեանց արժանի լիցին երանական մասին՝ առ բարեպէս քաղաքավարեալ. ըստ որում յաւուրս սոցա եղև շինութիւն Տանն Այ. և սոքա եղևն աշխատ ըստ իւրաքանչիւր պայմանի և կարողութեան: Որոյ վն ապա խնդրեսցուք ի Տեանէ, Վի տացէ սրբոյ եկեղեցոյս՝ հաստատութիւն անդորուելի յամ վնասուց՝ ըստ հոգևորին և ըստ մարմնաւորին՝ Աստուածային աջովն պաշտպանեալ մինչև ի կատարած աշխարհի, որ և առասցնն ամ հրեշտակք և մարդիկք եղիցի եղիցի:

Հուսկ ուրեմն արժանի տեսչիք յիշման ի բարի ՎՄեսրոպ եպիսկոպոս Վնուաստ հոգի, և Վներողութեամբն Այ առաջնորդ և վերատեսուչս քաղաքիս, որ ներկայ գտեալ նորոգութե սրբոյ եկեղեցոյս այս գծագրեցի Վհամայնոտ ծախօթութիւնս: Նկդրեմ, որ գաղափարէ վաս, և Վփոքր յիշատակիս գրեսցէ, և որ արասցէ՝ Վվարձս ի Տեանէ ընկալցի:

Ի ՌՄՀԷ (1828 թ.— Ն. Մ.), և ի սեպտեմբերի ԻԵ (25), ի Փիլիպպուպոյն քաղաք:

Սոյն եկեղեցոյս բազմամեայ երախտաւոր՝ Չաքարիա մաքրակրօն վարդապետն մեր, ի շինման սրբոյ եկեղեցոյս վերակոչեսցէ Տէր առ ինքն ի սեպտեմբերի ԻԹ (29), և ի թուին Հայոց ՌՄՀԷ (1828 թ.— Ն. Մ.). յաւուր տօնի սրբոյն Գեորգայ քաջայարթ փոռաւորին Քրիստոսի Տոն մերոյ, որ և եղաւ առ դրան տաճարիս սրբոյ եկեղեցոյս՝ ի դիր հանգըստեան՝ արժանաւոր իւրոյ հոգեջան երախտաւորացն, Վոր Տէր ընդ սք դասեսցէ և կենդանի օրհնութիւն ի մէջ մի վերջացի. ամէն:

Թ. 18.— Իսկ արդ՝ վերստին առ օրինակեալ սոյն առ ի նոյն օրինակէ անտի՝ ի յամենախոնարհ և նուաստագունեղ մարպէչ տեղոյս՝ Պետրոս անուն նեթ դարեա Անդրիանուպոլսեցոյ, յորդոյ վաճառական Տէրեայ Ստեփանի հանգուցելոյ ի Տէր:

յԱմի Տոն՝ 1828, և նոյնմբերի 7 ի սոյն Փիլիպպուպոյն բարեհամբաւ քաղաքի: Վերջ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 19. Սուլթան Մեհեմետ Դ-րդ գահակալեց յամին Քրստի. 1648: Հայոց գաղթականութիւնը իւր գահակալութեան 27-րդ տարին գաղթած են Բօլնիոյ Քամէշ քաղաքէն Անդրիանուպոլսի և անտի մաս մը Փ. Պօլիս (Ծանոթ.— այսինքն այժմյան Փոլովիվ քաղաքը—Ն. Մ.). այն է յամին Քսի. 1675:

Հաստութ Օսմանեան կայսրութեան թուականն է 1299:

- Աչքէ անցուցինք 10 հոկտեմբեր 1923-ին: (այստեղ կան չորս ստորագրութիւններ)
  - Կ. Գ. Փափապեան
  - Թ. Արզուման (եան)
  - Պ. Ս. Արգարեան
  - Գ. Իսն (մնացած մասը չի գրված—Ն. Մ.):
- (Այս թերթի վերնի աջ անկյունում կա մի փոքրիկ պիտակ, որի վրա արձանագրված է հետևյալը)
- № 23  
1917:  
(Շարունակելի)